



Համատեղ հայտարարություն. Միասին՝ ընդդեմ գենդերային բռնության

Նոյեմբերի 25-ն ամբողջ աշխարհում նշվում է որպես բռնության դեմ պայքարի միջազգային օր: Այս օրը նաև ազդարարվում է իրազեկվածության բարձրացման համաշխարհային քարոզարշավի՝ Գենդերային բռնության դեմ ակտիվության 16-օրյա քարոզարշավի մեկնարկը, որն անցկացվում է յուրաքանչյուր տարի՝ նոյեմբերի 25-ից դեկտեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում:

Կանանց և աղջիկների նկատմամբ բռնությունը դեռևս համարվում է մարդու իրավունքների ամենալուրջ խախտումներից մեկը: Այս ընկալումն արտացոլված է Կայուն զարգացման 2030 թվականի նոր համաշխարհային օրակարգում. գենդերային հավասարության վերաբերյալ 5-րդ նպատակն ունի առանձին թիրախ՝ մինչև 2030 թվականը վերջ դնելու բոլոր կանանց նկատմամբ գործադրվող խտրականության բոլոր ձևերին: Ամբողջ աշխարհում հարաբերությունների մեջ գտնվող կանանց գրեթե մեկ երրորդը նշում է, որ իրենց նկատմամբ գործադրվել է բռնության այս կամ այն ձևը՝ հիմնականում իրենց անմիջական գույքընկերների կողմից:

Հայաստանում գենդերային բռնությունը և հատկապես ընտանեկան բռնությունը նաև լուրջ մարտահրավեր է: 2016 թվականին, առաջին կիսամյակի պաշտոնական տվյալների համաձայն, հաղորդվել է ընտանեկան բռնության 373 դեպքի մասին, որոնցից յոթը եղել են մահվան ելքով:

Դրական ենք գնահատում Հայաստանում գենդերային բռնության խնդրի հաղթահարման ոլորտում գրանցված առաջընթացի մասին և հատկապես ողջունել Հայաստանի կառավարության գործադրած ջանքերը «Ընտանեկան բռնության մասին» օրենքի նախագիծը մշակելու ուղղությամբ, որի միջոցով հնարավոր կլինի լրացնել առկա զգալի օրենսդրական բացը: Մենք հույս ենք հայտնում, որ այդ օրենքի նախագիծը վերջնական տեսքի կբերվի մոտ ժամանակներում և կոչ ենք անում իրականացնել իսկապես մասնակցային, ներառական և խորհրդատվական գործընթաց:

Գենդերային բռնության խնդիրը հնարավոր չէ լուծել մեկուսի: Կանանց նկատմամբ բռնության խնդիրը հաղթահարելու համար հարկավոր են բոլոր շահագրգիռ կողմերի համաձայնեցված ջանքերը: Խրախուսում ենք պետական համակարգի բոլոր ներկայացուցիչներին, քաղաքացիական հասարակությանը և միջազգային համայնքին հավաստիանալու, որ առկա են բռնության զոհերին աջակցություն տրամադրելու համար անհրաժեշտ համապատասխան մեխանիզմները և ծառայությունները:

Քաղաքացիական հասարակության մեր հայ գործընկերներն օգնում են գորացնել կանանց Հայաստանի ամբողջ տարածքում և բարձրացնում իրազեկվածության մակարդակը բռնության կանխարգելման խնդրի վերաբերյալ:

«Ընտանեկան բռնության մասին» օրենքի ընդունումը նախանշում է երկարատև ճանապարհի սկիզբը: Վերջերս թողարկված՝ ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման հարցերով կոմիտեի Եզրափակիչ դատողությունների համաձայն՝ առաջարկում ենք վավերացնել Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին»:

Լրացուցիչ խրախուսում ենք ուշադրություն դարձնել արդյունավետ հաղորդակցային քարոզարշավներին՝ նպատակաուղղված կանանց գորացմանը և գենդերային կոշտ կարծրատիպերի ու ցանկացած այնպիսի ենթադրության վիճարկմանը, որ կանանց նկատմամբ բռնությունն ընդունելի սոցիալական նորմ է: Գործադրված ջանքերը պետք է բարձրացնեն իրազեկվածությունն այն մասին, որ կանանց նկատմամբ բռնությունը մարդու իրավունքների խախտում է և խտրականության ձև, և կենտրոնացվեն այն պատկերացումը ներդնելու վրա, որ ուժեղ տղամարդիկ ձեռք չեն բարձրացնում կանանց և երեխաների վրա:

Միջազգային համայնքը պատրաստակամ է աջակցելու Հայաստանի կառավարությանը՝ իրավական, քաղաքականության և մշակութային այնպիսի միջավայր ստեղծելուն ուղղված առաջընթաց քայլերի իրականացման հարցում, որտեղ կանայք հասարակության հավասար անդամներ են և արժեքավոր ներդրողներ՝ այս երկրի զարգացման գործում: